ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Համլետ Ա. Գևորգյան,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

1.0. Ստորև ներկայացվում է «Փիլիսոփայության օր» սահմանելու մոտիվացիան՝ ցույց տալով փիլիսոփայության հատուկ առաքելությունը հոգևոր ու մտավոր մշակույթի մեջ և հասարակության կյանքում:

1.1. «Փիլիսոփայության օր» սահմանելու գաղափարի առաջադրման համար վճռորոշ նշանակություն ունեցավ Փիլիսոփայության XX միջազգային կոնգրեսը (Բոստոն, ԱՄՆ, 1998 թ.), որը վերջինն էր XX հարյուրամյակում և երկրորդ հազարամյակում, ուստի և հավակնում էր մեկ հայացքով ընդգրկել փիլիսոփայության երկուս ու կես հազարամյա պատմությունը և պատմական առաքելությունը: Հենց այս միտումով էլ Կոնգրեսը որպես նշանաբան ընտրել էր «Παιδεια. Փիլիսոփայությունը՝ մարդկության դաստիարակ» կարգախոսը: Հին հունական փիլիսոփայության այդ կարևորագույն հասկացության՝ «պեդեայի»[1], բովանդակության սահմանումը մենք գտնում ենք Արիստոտելի մոտ: «Պեդեան» համատեղում է *կրթությունը* և *դաստիարակությունը,* որոնց համար Արիստոտելը առանձնացնում է երկու սկզբունք. բոլոր էակները վարվում են այնպես, «ինչպես թելադրում են իրենց բնությունը և սովորույթները», իսկ մարդը, օժտված լինելով բանականությամբ, բնությանը և սովորույթներին հակառակ է վարվում, *եթե* բանականությամբ համոզված է, որ դա ավելի լավ կլինի: Այսպես է սահմանվում «պեդեայի» առաջին սկզբունքը՝ *մարդու ազատությունը,* այն է՝վարվելու իր բանականությամբ ձեռք բերած համոզմունքին համապատասխան: Երկրորդ սկզբունքը բարոյական կատարելագործությունն է կրթության և դաստիարակության միջոցով՝ այստեղ էլ հարկ եղած դեպքում հրաժարվելով այն բանից, ինչն անհրաժեշտն է և օգտակարը:

Արիստոտելը այս սկզբունքները դնում է (այսօրվա տերմիններով ասած) հասարակական կյանքի և հասարակության քաղա-

---

[1] Սրանից են սերում «մանկավարժություն» նշանակող նաև հունարենի παιδαγωγια և լատիներենի paedagogia բառերը:

քական կազմակերպման հիմքում: Հատկանշական է, որ այս հարցերը Արիստոտելը քննում է իր «Պոլիտիկա», ավելի կոնկրետ՝ «Աթենքի պոլիտեան» աշխատության մեջ[1]: Կատարյալ կլինի, ասում է Արիստոտելը, որ պոլիս-պետությունը կառուցված լինի *բանականության* սկզբունքներով՝ ապահովելով իր քաղաքացիների կամքի ազատությունը և նրանց կրթությունն ու դաստիարակությունը «պեդեայի» ոգով:

1.2. Եվրոպական քաղաքակրթությունը (նրա մշակույթը և հասարակական կյանքի նրա իդեալը) տիպաբանական տեսակետից որակապես տարբեր է, բայց իր կազմավորման պատմական տևական ընթացքում նա դարձավ հունա-հելլենիստական փիլիսոփայության և հռոմեական պետա-իրավական մտքի ժառանգորդը՝ յուրացնելով բանական հասարակության, մարդու և քաղաքացու ազատության, իրավունքների և պարտականությունների գաղափարները, կրթության և դաստիարակության դասական իդեալը: Դրա խտացված արտահայտությունը եղավ Լուսավորականության գաղափարախոսությունը, իսկ նրա գլխավոր ներկայացուցիչը՝ Իմանուիլ Կանտը, որի ուսմունքը և որի անվան հետ կապված փիլիսոփայական ուսմունքները վերլուծության և բանավեճերի կենտրոնում էին ամբողջ XIX և XX դդ.:

Բնութագրելով իր ժամանակի հասարակությունը՝ Կանտը գրում է, որ արվեստի և գիտության շնորհիվ այն հասել է "մշակույթի բարձր աստիճանին": Արվեստը և գիտությունը այն բնագավառներն են, որտեղ մարդիկ հնարավորություն ունեն լինելու պետության (կառավարության) հսկողությունից դուրս, ուրեմն՝ կարող են իրենց ազատ զգալ արտաքին հարկադրանքից (պարտադրական գաղափարներից, կողմնորոշումներից և այլն): Բայց արվեստն ու գիտությունը մշակույթի քաղաքակրթական մակարդակն են սոսկ, և *բարոյականության* բնագավառում դրանք կարող են ապահովել միայն արտաքին (երևութական) կողմը՝ *քաղաքակիրթ*, բարեկիրթ լինելը, մինչդեռ *բարոյապես կատարյալ* լինելու համար հարկավոր է, որ մարդկային հասարակությունը կատարի հաջորդ քայլը դեպի հասունություն, դեպի իր զարգացման այն աստիճանը, երբ յուրաքանչյուր մարդը իբրև քաղաքացի կկարողանա իր բանականությունն օգտագործել *ազատորեն*, որպեսզի իր բանական ընտրությամբ զանազանի բարին ու չարը և իր ընտրած ձևով կառուցի իր բա-

---

[1] Կատարյալ պետական կառուցվածքի մասին որոշ նկատառումներ նա հայտնում է վերը մեջբերված մտքերին անմիջապես հաջորդող պարբերություններում (տե՛ս *Արիստոտել*, Պոլիտիկա, 1333b-1334a 17: *Аристотель*. Сочинения (в четырех томах), т. 4, М., "Мысль", 1984, с. 617-619):

որությունը[1]: Կանտը կարծես թե բառացիորեն վերարտադրում է արիստոտելյան գաղափարները: Մարդու մեջ բանականությամբ ղեկավարվելու և հրապարակավ ազատորեն գործելու կարողություն ու քաջություն մշակելն էլ հենց դաստիարակության խնդիրն է: Մարդն ազատ է, երբ նրա միտքը և գործողությունները կաշկանդված չեն նախապաշարմունքներով, այն գաղափարներով, պատկերացումներով, նորմերով ու արժեքներով, որոնք նրան պարտադրվում են դրսից՝ լինի դա եկեղեցին, պետությունը, թե մի այլ հասարակական հաստատություն, այսինքն՝ մարդն ազատ է, երբ նա ղեկավարվում է իր բանականությամբ ընտրած համոզմունքով և գործում է իր ընտրած եղանակով ("եթե դա համատեղելի է մյուսների ազատության հետ", վերապահում է անում Կանտը): Մարդը պետք է հասնի այն գիտակցության (և նրան այդ հնարավորությունը և գիտակցությունը պետք է տրվեն), որ ինքն է իր բանականությամբ ազատորեն ընտրելու իր հավատալիքները և գործելակերպը[2] :

1.3. Այստեղ հանդես է գալիս ևս մեկ կարևոր հանգամանք: Թե՛ Արիստոտելը և թե՛ լուսավորիչները մարդու բանական՝ ռացիոնալ ազատ վարքի և բարոյական կատարելագործման իդեալը կապում են պետության, որպես հասարակական կյանքի կազմակերպման և կարգավորման բարձրագույն ձևի, կատարելագործման գաղափարի հետ[3]: Իդեալական կլինի, եթե պետական-հասարակական կյանքը այնպես կազմակերպված լինի, որ նրա նորմերը և օրենքները ոչ թե արտաքին պարտադրանք լինեն, այլ ընդունվեն գիտակցաբար և ընձեռեն ընտրություն կատարելու հնարավորություն: Մարդը պետք է կարող լինի օգտագործելու իր բանականությունը առանց որևէ մեկի կողմից ղեկավարվելու: Իսկ դա հնարավոր կլինի, եթե հասարակական կյանքը կարգավորող նորմերն ու օրենքները ազատորեն՝ սահմանվեն ու մշտապես կատարելագործվեն քաղաքացիների կողմից:

---

[1] Տե՛ս И. Кант. Сочинения (в шести томах), т. 6. М., "Мысль", 1966, с. 18-20.

[2] Նույն տեղում, էջ 27-35: "Նախապաշարմունքից ազատագրումը անվանվում է Լուսավորականություն", ասում է Կանտը մեկ ուրիշ տեղում (И. Кант. Сочинения, т. 5, с. 308):

[3] Հատկանշական է, որ Կանտը Լուսավորականության հարցերը նույնպես քննում է "կատարյալ քաղաքացիական հասարակության" ստեղծման խնդիրներին նվիրված "Համընդհանուր պատմության գաղափարը համաշխարհայինքաղաքացիական տեսանկյունից" և "Այն հարցի պատասխանը, թե ինչ է Լուսավորականությունը" աշխատություններում (տե՛ս И. Кант. Сочинения, т. 6).

Ամերիկյան փիլիսոփայության, ինչպես և քաղաքական գիտակցության մեջ իշխում է այն համոզմունքը, որ հենց Լուսավորականության սկզբունքներն են, որ Անկախության պատերազմից և անկախության հռչակումից ի վեր որպես իդեալ դրված են եղել իրենց երկրի պետահիրավական կառուցվածքի և հասարակական կյանքի կազմակերպման եղանակի հիմքում: Դրանք կոչված են ապահովելու, որպեսզի քաղաքացիները գործի դնեն սեփական միտքը ինքնուրույնաբար, առանց որևէ մեկի կողմից ղեկավարվելու, առանց պարտադրանքի և հրապարակավ, նախապաշարմունքներից ազատ իրենց ըմբռնումներով, որովհետև պետական-հասարակական կյանքն ինքը կառուցված է ռացիոնալ կերպով՝ բանականության հիման վրա, այսինքն՝ այն նորմերով և օրենքներով, որոնք քաղաքացիներն իրենք են սահմանում կամքի ազատ արտահայտման տարբեր եղանակներով: Այս կերպ համատեղվում են սեփական միտքը ազատորեն, առանց որևէ մեկի ղեկավարության գործի դնելու և, մյուս կողմից, օրենքի գերակայության մասին դրույթները: Այս համատեքստում միանգամայն հասկանալի է, թե ինչու ամերիկյան Լուսավորականության դարաշրջանը անվանում են "բանականության դարաշրջան")[1]:

1.4. Հիմա՝ հումանիտար գիտակարգերի / դիսցիպլինների և հասարակական գիտությունների մասին: XVIII—XIX դդ. սահմանագծին կազմավորվեց և որպես ինքնուրույն գիտակարգ (դիսցիպլին) առանձնացավ դասական բանասիրությունը: Դա որակապես մի նոր էջ էր լեզվաբանության պատմության մեջ: Ուշագրավ և նշանակալից են բանասիրական-լեզվաբանական հետազոտությունների առնչությունները փիլիսոփայության, հատկապես փիլիսոփայության պատմության հետ: Այդ ժամանակից ի վեր գիտելիքների մասնագիտացման գործընթացը և հատուկ գիտակարգերի կազմավորումը բնորոշ դարձան նաև պատմության համար: Հրապարակ եկան հիմնարար պատմական հետազոտություններ՝ նվիրված առանձին ժամանակաշրջաններին, երկրներին, կրոնին ու եկեղեցուն և այլն, որոնք աչքի էին ընկնում պատմական նորանոր նյութերի ներգրավմամբ, աղբյուրների քննական վերլուծությամբ, մանրամասների ճշգրտմամբ: Պատմագիտության այդպիսի զարգացումն ուղեկցվեց պատմական հատուկ գիտակարգերի (դիսցիպլինների)՝ հնագիտության և ազգագրության ասպարեզում կատարվող հետազոտությունների ծավալմամբ, բանագիտական, վիմագրագիտական, լեզվա-պատմագիտական, մշակութաբանական և նման կարգի այլ

---

[1] *The American Age of Reason: Benjamin Franklin, Thomas Jefferson, Thomas Paine.* Moscow: Progress Publishers, 1977.

ուսումնասիրություններով, որոնք ժամանակի ընթացքում հետզհետե վերածեցին ինքնուրույն գիտակարգերի՝ իրենց որոշակի հասկացութային համակարգերով ու հետազոտության մասնագիտացված եղանակներով, հետևաբար և պահանջեցին հետազոտող գիտնականների նեղ մասնագիտացում:

Գիտության զարգացման այս բնական առաջընթացը դեպի մասնագիտացում ունեցավ, սակայն, նաև մի այլ, անցանկալի հետևանք՝ ընդհանուր տեսադաշտի կորուստ, թերահավատություն թեկուզև վերացական, բայց ամբողջացնող պատկեր ունենալու անհրաժեշտության նկատմամբ: Եվ դարձյալ փիլիսոփայությունն էր, որ ստանձնեց այդ առաքելությունը (այստեղ կարևոր չէ, թե ինչ անվանումներով՝ ավանդական «պատմության փիլիսոփայություն», թե «պատմության մեկնաբանություն»):

Եթե թույլատրելի են զուգահեռներ, ապա կարելի է ասել , որ պատմական գիտության դասական ներկայացուցիչների (Վ. Հումբոլդտ, Ֆ.Շիլլեր, Գյոթե, Լեսինգ, Հերդեր, Կանտ, Շլայերմախեր, Հեգել, Մարքս, Լ.Մորգան, Թայլոր, Բրեդլի, Վինդելբանդ, Ռիկերտ, Քոլինգվուդ, Բոաս, Բիդնի, Կրյոբեր...)՝ պատմության տեսական հարցերին նվիրված աշխատությունները նույն նշանակությունն ունեցան պատմական գիտության համար, մշակույթի տեսության ու պատմության համար, ինչ բնագիտության համար նրա այն դասական ներկայացուցիչների գրվածքները, որոնք Արևմուտքում հորջորջվում են փիլիսոփա գիտնականներ: Եվ Ալբերտ Էյնշտեյնը, Նիլս Բորը, Մաքս Պլանկը, Մաքս Բոռնը, Էրվին Շրյոդինգերը, Վեռներ Հայզենբերգը, Լուի դը Բրոյլը և մյուսները դա ընկալում էին որպես իրենց դարակազմիկ հետազոտությունների բուն էության ճշգրիտ անվանումը:

1.5. Ինչպես որ եղավ Փիլիսոփայության XX միջազգային կոնգրեսում, այդպես էլ նրանից հետո այս ամենը չի ընկալվում որպես մի պատմական էքսկուրս, որպես փիլիսոփայության և գիտության պատմության որոշակի դրվագների շարադրանք: Սա ընկալվում է որպես այն համոզմունքի արտահայտություն, որ մեր դարաշրջանում ևս փիլիսոփայությունն է մարդու ռացիոնալ ազատ վարքի և բարոյական կատարելագործման իդեալի կրողը, և փիլիսոփայության առաքելությունն է՝ ապահովել, որ պետական-հասարակական կյանքը կառուցված լինի ռացիոնալ կերպով՝ բանականության հիման վրա, այսինքն՝ այն նորմերով և օրենքներով, որոնք քաղաքացիներն իրենք են սահմանում կամքի ազատ արտահայտման եղանակներով:

2.0. Հաջորդ հանգամանքը, որով պայմանավորված է հոգևոր մշակույթի ոլորտում և հասարակության կյանքում փիլիսոփայութ-

յան եզակի դերակատարությունը, կապված է այն բանի հետ, որ Նոր և ապա Նորագույն պատմության մեջ որակապես փոխվում է փիլիսոփայություն — գիտություն հարաբերությունը:

2.1. Մտքի հսկաները, որոնք սկզբնավորեցին Նոր ժամանակի բնագիտությունը՝ բառիս ժամանակակից իմաստով գիտությունը, միաժամանակ, գուցե և առաջին հերթին, փիլիսոփաներ էին: Այդ պատմական ժամանակաշրջանը, որն ընդգրկում է XVI դարից մինչև XVIII-ի վերջը և XIX-ի սկիզբը, բնորոշվում է հենց այն բանով, որ նրա՛նք էին իսկապես փիլիսոփայական բանավեճերի մասնակիցները[1]: Մի ամբողջ փիլիսոփայական գրականություն ստեղծեցին Դեկարտը, Պասկալը, Լայբնիցը ... և Բեկոնը, Հոբսը, Լոկը, Հյումը իրենց ապացուցումներով ու հերքումներով, վերլուծություններով ու որոնումներով: Ցայտուն օրինակ են Ջոն Լոկի «Ակնարկներ մարդու ըմբռնողության վերաբերյալ» աշխատությունը և Գոտֆրիդ Լայբնիցի «Նոր ակնարկները մարդու ըմբռնողության վերաբերյալ», Լայբնիցի և Նյուտոնի հեռակա մրցակցությունը մաթեմատիկական անալիզի (դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի) ստեղծման գործում, էյլերի, Լապլասի, Դալամբերի աշխատությունները մաթեմատիկական մտածողության առանձնահատկությունների, մաթեմատիկայի հիմունքների վերաբերյալ, Նյուտոնի «Բնական փիլիսոփայության մաթեմատիկական սկզբունքները» աշխատությունը, որը փիլիսոփայական գործ է հավասարապես, Լայբնիցի մոնադոլոգիան և այլն: Բնագիտության և մաթեմատիկայի դասականների քննարկումների մեջ կենտրոնական տեղ էին զբաղեցնում «զուտ» փիլիսոփայական՝ իմացաբանական ու մեթոդաբանական թեմաները, ինչպիսիք են՝ ինտուիցիան, ինտուիտիվ ակնհայտությունը և գիտելիքի ճշմարտությունը, փորձ և տեսություն, հավանական և հավաստի գիտելիք, հիպոթեզի «կարգավիճակը» գիտության մեջ, աբստրակցիայի դերը իմացության մեջ և ուր.: Այս ավանդույթը շարունակվեց XIX և XX դդ. Ակնառու օրինակներ են «փիլիսոփա-գիտնական» մեծարվող Ալբերտ էյնշտեյնի, Նիլս Բորի, Մաքս Բոռնի, Էրվին Շրյոդինգերի, Վեռներ Հայզենբերգի, Վլադիմիր Ֆոկի փիլիսոփայական արձակը և XX դարի սկզբի մեծագույն մաթեմատիկոս, ֆիզիկոս և փիլիսոփա Հանրի Պուանկարեի աշխատությունները:

2.2. Իհարկե, այս ամբողջ գրականությունը՝ իր հարցադրումներով, լուծումներով, որոնումներով, առանձին գիտաճյուղերի / գիտակարգերի / գիտական դիսցիպլինների պատմությանն է պատ-

---

[1] Մանրամասնությունները տե՛ս *Հ.Ա.Գևորգյան,* Գիտելիքի ժամանակակից տեսության ակնարկ (Ե., ԳԱ հրատ., 1978) գրքում, գլուխ երկրորդ:

կանում, և ուրեմն, *միակողմանի մոտեցման դեպքում,* այն կարող է անտեսվել կամ, ավելի ճիշտ, «*վերառվել*» գիտության զարգացման ընթացքում (եթե գործածելու լինենք Հեգելի տերմինը՝ *aufhebwung*, որ ռուսերեն թարգմանվել է *снятие*): Հիմա տեսնենք, թե ինչ առանձնահատկություններ ունեն տարբեր գիտակարգերի մոտեցումները իրենց պատմությանը:

Ցանկացած գիտական դիսցիպլինն հարաբերականորեն անկախ է իր պատմությունից՝ այն չի աշխատում իր *հիմնավորումը* գտնել իր պատմության մեջ: Իհարկե, ցանկացած գիտակարգ պատմական յուրաքանչյուր պահին լուծում է նախորդ ժամանակաշրջանից (իր պատմությունից) ժառանգած խնդիրներն ու հարցադրումները, բայց հետո «ազատվում է» ձեռք բերած գիտելիքների այն առանձնահատկություններից, որոնք *պատմականություն* են հաղորդում նրան: Այսպես, օրինակ, ֆիզիկայի մեջ Բոլցմանի հաստատունը, վոլտն ու վոլտաժը, վատտն ու օհմը, մաթեմատիկայի մեջ՝ դեկարտյան կոորդինատները և այլն, ամենևին էլ պատմական հիշատակություններ չեն, դրանց գործածությունը նպատակ չունի առաջ բերել զուգորդություններ (ասոցիացիաներ) պատմական անձերի, պատկերացումների, տեսությունների վերաբերյալ, դրանք սովորական տերմիններ են, որ ներկայումս գործածվում են տեսության մեջ և նրա կիրառություններում:

Սակայն այլ է վիճակը փիլիսոփայության պարագայում: Փիլիսոփայական գրվածքներում, տեսություններում, դասընթացներում և այլն (նույնիսկ եթե դրանք հավակնում են լինելու ուրույն և նոր ու այժմեական) պատմական հիշատակությունները, զուգորդություններն անխուսափելի են: Ես նկատի ունեմ անցյալի հեղինակների և գաղափարների ոչ միայն ուղղակի վկայակոչումները, ինչը մի սովորական բան է փիլիսոփայական գրվածքներում: Փիլիսոփայության բառապաշարն ինքը «ծանրաբեռնված» է անցյալի գաղափարների ու տեսությունների հետ առնչվող զուգորդություններով և պատմական հիշողության այլ ձևերով, որոնցից այն չի կարող «ազատվել», հրաժարվել, որովհետև մեծապես նաև դրանց միջոցով է այսօրվա փիլիսոփայական գրվածքը հասկացվում, ընբռնվում, մեկնաբանվում, դրանցով են ընթանում երկխոսությունը, բանավեճը, դիսկուրսը:

Նկատի ունենալով փիլիսոփայության *պատմականության* այս առանձնահատկությունը՝ պատմական լիցքը, որ նա կրում է, — կարելի է պնդել, որ փիլիսոփայության շնորհիվ է և փիլիսոփայական կրթության միջոցով է, որ պատմական անցյալի գաղափարներն ու տեսությունները և դրանց հեղինակները շարունակաբար «ներկա են» ժամանակակից աշխարհում՝ աշխարհայացքի մեջ, բանա-

վեճերում, քննարկումներում, արժեքային գնահատություններում: Ավելի ակնհայտ դարձնելու համար մի պահ պատկերացնենք, որ փիլիսոփայությունը բացառվել է գրական մշակույթից և կրթությունից: Այսպիսի դեպքում, արդեն մի սերունդ հետո մոռացության գիրկն անցած կլինեն փիլիսոփաների անունները՝ սկսած Պյութագորասից, Զենոնից և Եվդոքսից, Պլատոնից և Արիստոտելից մինչև Էրազմոս, Բրունո և Դեկարտ, սկսած Գրոցիոսից և Լոկից մինչև Կանտ, Ռուսսո, Կոնտ և Մարքս, սկսած Սպինոզայից և Լայբնիցից մինչև Վայերշտրաս և Հիլբերտ, մինչև Բոլցանո, Բոլցման և Մախ, մինչև Էյնշտեյն և Պուանկարե... Նկատենք, որ մոռացության այս ցուցակի մեջ միաժամանակ հայտնվում են մաթեմատիկայի, ֆիզիկայի և հումանիտար գիտակարգերի դասականները:

Ուրեմն, նորից հիշենք, որ չկա որևէ գիտակարգ (գիտական դիսցիպլին), բացի փիլիսոփայությունից, որն իր շարադրանքի համար զգար կարիքը և իր շարադրանքի մեջ պարունակեր անհրաժեշտաբար պատմական հիշատակություններ և ուղղակի պատմական վկայակոչումներ՝ անձերի, տեսությունների, գաղափարների:

Այս տեսակետից փիլիսոփայությունը նմանվում է, ավելի շուտ, ոչ թե գիտություններին և հումանիտար գիտակարգերին, այլ՝ մշակութային երևույթներին, ասենք՝ գեղարվեստին, եթե նկատի առնենք, որ գեղարվեստի գործերը ինչ-ինչ առումով տարաժամանակյա չեն, այլ՝ մի տեսակ ոչ- կամ վեր-պատմական, համաժամանակյա երևույթներ մշակութային ամբողջության մեջ, մշակութային միևնույն տարածության մեջ: Այդպես է նաև փիլիսոփայության պարագայում. փիլիսոփայության դասականները, նրանց գաղափարներն ու գործերը (և, դրանց հետ նաև մաթեմատիկայի և բնագիտության դասականները իրենց ընդհանուր-տեսական և փիլիսոփայական աշխատություններով) «կողք կողքի» գոյակցում են փիլիսոփայության պատմական ամբողջության մեջ, փիլիսոփայության շարադրանքներում: Նրանք մեր այսօրվա բանավեճերի, քննությունների ու քննադատության, ապացուցումների ու հերքումների (մի խոսքով՝ դիսկուրսի), այսպես ասած, մասնակից կողմերն են՝ յուրաքանչյուրը եզակի, անհատական, անկրկնելի, ինչպես որ արվեստի գործերն են լինում:

2.3. Հիմա, «փիլիսոփայությունը, փիլիսոփայական աշխատությունը անհրաժեշտաբար երկխոսություն է փիլիսոփայության դասականների հետ» թեզին պետք է ավելացնենք նաև այն պնդումը, որ գիտության պատմությունը (որևէ գիտակարգի / գիտական դիսցիպլինի պատմությունը, *գիտության պատմագրությունը*) նույնպես վերածվում է փիլիսոփայական շարադրանքի: Հիշենք Ֆ. Դաննեմա-

նի «Բնագիտության պատմության» երեք հատորները, Հ.Գ.Ցոյթենի, Հ.Վիլայտների, Դ.Յ.Ստրոյկի՝ մաթեմատիկայի պատմության միհատորյակները, Պ.Ս.Կուդրյավցևի «Ֆիզիկայի պատմություն» հոյակապ երկհատորյակը, Վ.Ա.Զվեգինցեվի «Լեզվաբանության պատմությունը XIX և XX դդ.» իր տեսակի մեջ եզակի երկհատորյակը, որոնք տվյալ գիտակարգի մասնագետների և, հավասարապես, փիլիսոփաների սեղանի գրքերն են եղել: *Համարձակ կերպով կարելի է ասել, որ գիտության պատմագրությունը գոյատևում է փիլիսոփայության հովանու տակ:* Ժամանակակից ֆիզիկայի մասնագետը վստահաբար և իրավացիորեն նշում է դասական ֆիզիկայի «սահմանափակությունները», բայց դուք կարող եք համոզված լինել, որ նա չի կարդացել Նյուտոնի «Բնական փիլիսոփայության մաթեմատիկական հիմունքները», որովհետև նա դրա կարիքը չունի, այդ ուսմունքը «վերառված է» ֆիզիկայի հետագա զարգացման ընթացքում: Իսկ ֆիզիկայի դասականը, փիլիսոփա-գիտնականը անպայման կարդացել է... Վերլուծել է: Անդրադարձել է իր գրվածքներում: Եթե չվերցնենք մասնավոր դեպքերը, ապա ընդհանուր առմամբ դասական գիտնականի պահվածքով է, որ գիտնականների և մտավորականների հանրության մեջ սահմաններ են դրվում մտածողության տեխնիցիզմի և օգտապաշտական (ուտիլիտարիստական) վարքագծի դեմ:

3.0. Փիլիսոփայության մեջ նույնպես տեղի է ունեցել մասնագիտացման, փիլիսոփայական առանձին դիսցիպլինների, ինքնուրույն գիտակարգերի, մասնաճյուղերի կայացման և ինքնահաստատման գործընթաց: Փիլիսոփայական դիսցիպլինները և ինքնուրույն մասնաճյուղերը երկու կարգի են[1]:

3.1. Պատմականորեն փիլիսոփայության ներսում գոյացել են հարաբերականորեն ինքնուրույն բնագավառներ, որոնք առանձին տեսություններ են կազմում խիստ ուրույն իմաստով, այն է՝ հարցադրումների ընդհանրությամբ, բայց ենթադրում են դրանց տարբեր, որպես կանոն հակադիր, երկընտրական լուծումներ: Այդպիսիք են՝ (ա) Բնափիլիսոփայությունը, գոյաբանությունը, մետաֆիզիկան, որոնք վերաբերում են աշխարհի սկզբնահիմքերի, օրինաչափությունների և նման ընդհանրական էությունների նկատմամբ վերացական փիլիսոփայական անդրադարձին: (բ) Իմացաբանությունը / ճանաչողության տեսությունը / էպիստեմոլոգիան, որոնցում քննվում

[1] Հեղինակի կոնցեպցիան շարադրված է Հայկական Սովետական Հանրագիտարանի (ՀՍՀ) համար գրած «Փիլիսոփայություն» հոդվածում (տե՛ս ՀՍՀ, հատոր 12, էջ 338-341), իսկ հայ փիլիսոփայությանը վերաբերող մասը վերատպվել է Հայկական Համառոտ Հանրագիտարանի 4–րդ հատորում (Երևան,2003):

է աշխարհի ճանաչելիության խնդրակարգը՝ մեթոդները, հնարավորությունները, սահմանները, մտակառուցման և պատմական վերակազմության եղանակները և այլն: (գ) Մարդուն, մարդկային հասարակությանը, պատմությանը վերաբերող ուսմունքներն ու գիտակարգերը՝ տարբեր անվանումներով ու տարբեր ընդգրկումներով՝ սոցիալական փիլիսոփայություն, ոգու փիլիսոփայություն, փիլիսոփայական մարդաբանություն, պատմության փիլիսոփայություն՝ իր ենթաճյուղերով, և այլն: (դ) Փիլիսոփայության պատմություն՝ իր հատուկ և օժանդակ գիտակարգերով:

3.1. Փիլիսոփայության ներքին բաժանմամբ գոյացած գիտակարգերից / դիսցիպլիններից բացի, կան մի շարք բուն իմաստով մասնավոր գիտություններ, որոնք էականորեն հարում են փիլիսոփայությանը, երբեմն էլ անվանվում են հենց փիլիսոփայական գիտություններ/դիսցիպլիններ՝ բարոյագիտություն, գեղագիտություն, սոցիոլոգիա, գիտաբանություն, քաղաքագիտություն, նաև՝ տրամաբանությունը և մշակութաբանությունը՝ իրենց ընդհանուր տեսական մասով:

Ժամանակակից փիլիսոփայության առանձնահատկությունն այն է, որ փիլիսոփայական գիտակարգերը միջնորդավորում են փիլիսոփայական մտահայեցողական անդրադարձը բնության, մարդու և հասարակության նկատմամբ:

3.2. Ինչպես որ գիտելիքների մյուս բնագավառներում, նեղ մասնագիտացումը մեծ հնարավորություններ է ընձեռում առանձին խնդիրների լուծման համար, բայց դժվարացնում է փոխ-հաղորդակցությունը, բանավեճը, քննարկումները, դիսկուրսը ընդհանրական բնույթի խնդիրների լուծման դեպքում, որոնք պահանջում են համատեղ ջանքեր՝ տարբեր տեսանկյուններից, տարբեր մոտեցումներով: Եվ նորից հարցը հանգում է տեսության կարևորությանը, կրթության մեջ տեսական գիտակարգերի / դիսցիպլինների անհրաժեշտությանը, իսկ հասարակական կյանքում, թեկուզ և որպես իդեալ, հոգևոր ու մտավոր մշակույթի բարձր արժեքների սերմնավորում: